

ՀԱՅԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆԵԼՈՒԿՆԵՐԻ
ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

ՎԱՐՄԻԿ ՆԵՐՄԻՍՅԱՆ

Ժողովրդի լեզվամտածողության, կենցաղավարման ու կենսակերպի դրսևորման բանահյուսական ամենատարածված և ամենակիրառելի ժանրերից մեկը, թերևս, հանելուկն է: Այն բնորոշվում է որպես «բառերի որոշակի կապակցություն, որի մեջ այլաբանորեն թաքնված է որևէ իմաստ, որը ենթակա է վերհանման կամ գուշակման»¹: Հանելուկները, հին ժամանակներից սկսած, օկենցաղավարել են իբրև մտավոր ունակությունները զարգացնող, բանակալությունը մարզող մի մտախաղ՝ որոշակի սահմանազատվելով զգայական հաճույք պատճառող կամ բարոյակրթական նպատակներ հետապնդող բանահյուսական մյուս ժանրերից»²:

Ծառայելով մարդկային միտքն ու բանականությունը ստուգելու նպատակին՝ հանելուկներին բնորոշ են լեզվաոճական մի շարք առանձնահատկություններ, որոնցով էլ դրանք զգալիորեն տարբերվում են բանահյուսական և գրական այլ ժանրերից:

Ներկայացնենք հանելուկների այդ առանձնահատկություններն ըստ լեզվական առանձին մակարդակների:

1. Հնչյունական առանձնահատկություններ: Հնչյունների ոճական արժեքը դրսևորվում է ամենից առաջ երկու ձևով՝ բաղաձայնային և առձայնային: Բաղաձայնայինը առհասարակ խորթ չէ ժողովրդական բանահյուսությանը³: Եվ ահա բազմաթիվ հանելուկներում առկա է բաղաձայնների կուտակում: Օրինակ՝ Տիգրը տղիցը կպավ, Տիգրը պատիցը կպավ, Գնացեք տգան մորն ասեք գա, Տիգրը տղիցը պոկի, Տիգրը պատիցը պոկի «բանալի» (170): Բացի նրանից, որ նշված հանելուկի մեջ պարբերաբար կրկնվում է տիգ բառը՝ զանազան ձևափոխություններով, նաև առկա է պ բաղաձայնի կրկնություն:

Հանք, հանք, հրավանք, Օխտը դռան դեմ առանք (Մեծ պաս, 195) հանելուկում առկա է հ-երի կուտակում: Կամ՝ Մուրը սուռն, Դավիթը քուն, Էրկաթե սուռն (հրացան և փամփուշտ, 190) հանելուկի մեջ առկա է թ-երի կրկնություն, ինչպես նաև հանգերի պահպանում: Նույն երևույթի դրսևորումներ են հետևյալ հանելուկները ևս՝ Թուր ու թվանք թամբումը, Ջուխտ աղունակ վանքումը (հարս և փեսա, 87): Մարի գլխին էրկու դոճ, Մինը փնջած, մինը ոչ, Մեռնիմ Աստծու դիվանին (դատաստան), Մնին կտա, մնին ոչ (հարս և փեսա, 88):

¹ Մ. Հ ա ղ ո թ յ ո լ ն յ ա ն. Բանագիտական ակնարկներ, Երևան, 2011, էջ 250:

² Մ. Հ ա ղ ո թ յ ո լ ն յ ա ն. Հայ ժողովրդական հանելուկներ (համահավաք բնագիր), Երևան, 1965, էջ Ը: Այսուհետև գրքի էջերը կնշվեն տեքստում՝ օրինակներին կից:

³ Տե՛ս Լ. Ե զ ե կ յ ա ն. Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, էջ 113:

Ժողովրդական հանելուկներում լայն գործածություն է ստացել նաև առձայնությո՞ւր, *ինչպես՝ 1. Անծին ծնավ, Անմահ մեռավ, Անեղնել եղավ (Քրիստոս, 193): 2. Էն ի նչն ա, ի նչ. Էստեղ պուպուգ, Էնտեղ պուպուգ, Դռնովը դուս (աղբ, 203): 3. Անծակ մարգրիտ, Անուրը դերձան, Աստուծ կու շարէ, Մարդը կու քաշե (ատամներ, 97):*

Ինչպես և նկատելի է բերված օրինակներից, հանգավորումը գրեթե միշտ հանդես է գալիս առձայնությի կամ բաղաձայնությի հետ միաժամանակ: Եվ երբեմն դժվար է լինում գտնել այն սահմանը, որով կարելի է զանազանել այս երևույթները միմյանցից: Այնուամենայնիվ, հանելուկներից մի քանիսն առանձնացրել ենք իբրև առավելաբար հանգավորման դրսևորումներ:

1. Կուգա աղի պես, Նստի փաշի պես, Կերթա բռշի պես (ձյուն, 17):

2. Դանակ գարկի դուռը բացի, Մե-սև ուլեր դուս լըցի (ձմերուկ, 42):

3. Մե քյանձ տաթ, Միվտակ քյանձ կաթ, Կլորված նուկի (կշռաքար),

Կերթա քյանձ նետի (լոբ, 77):

4. Պապեն նստե տունը, Ոտեր խանե տունը (ծխամորձ, 115):

5. Հնդտան, Արաբստան, Երկու կաքավ էկան նստան, Չագեր թռան, մե-րեր նստան (կողպեք-բանալի, 170):

6. Տիգը վզից ա կապած, Կիգը տզից ա կապած.

Մինչև տերը տուն չգա, Տիգը տզից պոկ չի գա (բանալի, 170):

7. Մեկ լցնեմ՝ խնդաս, Մեկ լցնեմ՝ դնտաս, Մեկ էլ լցնեմ՝ աշխար մոռնաս (գինի-գավաթ, 114):

8. Օջի բուն, լվի քաղաք, Շոքուն թևաշաղկ, Անձրևուն խաղկ ու խայտա-տակ (քուրք, 117):

Ինչպես երևում է վերոբերյալ օրինակներից, հանգավորումը դրսևորվել է թե՛ ամբողջական բառերի կրկնությամբ (պես-պես, քյանձ-քյանձ, մեկ-մեկ և այլն), թե՛ բառամասերի մասնակի կրկնությամբ՝ մեկ-երկու հնչյունի տարբե-րությամբ (աք-ակ-ակ, դաս-տաս-նաս) և այլ տարբերակներով:

Բառապաշարային առանձնահատկություններ: Ժողովրդական հանելուկ-ներում առանձին քննության առարկա է բառապաշարը, որը, բնականաբար, լի է բարբառային տարրերով:

Հանելուկներում, անշուշտ, լայն գործածություն ունեն համագործածական կամ միջոճական բառերը [ջուր, կարմիր, ցորեն, գլուխ, ոտք (174), կով, եղբայր, քար, թագ (175) և այլն] ևս, որոնք, հանդես գալով ուղղակի կամ փոխաբերա-կան իմաստներով, երբեմն շատ գեղեցիկ նրբերանգներ են հաղորդում խոս-քին ու ստանում ոճական յուրահատուկ կիրառություն: Հանդիպում են նաև կրկնավոր բարդություններ, ինչպես՝ Մե-սև ուլնիկ (ուլեր), Պառկի կողիկ (հոնքեր և ճակատ, 93): Շարան-շարան, Ուղտի քարվան (շուջուխ) (113):

Այդ բառերը շատ են, և, բնականաբար, կարիք չկա բոլորը թվարկել: Մա-կայն, իհարկե, հանելուկներում գերակշռում են բարբառային և ժողովրդախո-սակցական բառաշերտերը ներկայացնող միավորները: Դա ամենից առաջ պայմանավորված է հանելուկների՝ գլխավորապես առօրյա խոսակցական ո-ճում գործածական լինելու փաստով:

Հետաքրքիր է, որ հանելուկները, ստեղծվելով բարբառային տարրեր միջա-վայրերում, գլխավորապես հյուսված են ժողովրդախոսակցական բառապա-շարի հիմքի վրա: Ընդունելով բարբառային բառերի գործածության բաժա-

նումն ըստ գավառաբանությունների և հասարակաբանությունների՝ պետք է ասել, որ վերջինները գերակշռում են ժողովրդական հանելուկներում:

Թերևս դա է պատճառը, որ հանելուկների լեզուն հասկանալի է տարբեր բարբառներով խոսող մարդկանց համար: Պետք է նշել, որ համահավաք բնագրում ներկայացված այս կամ այն հանելուկը գրի է առնված տարբեր տարածքներում, և առկա են միևնույն բովանդակությամբ հանելուկի տարբերակներ: Դրանք երբեմն կարող են տարբերվել մեկ-երկու բառով: Օրինակ՝

1. Ծովակ մը կա, Մեջ ծովակին օձիկ մը կա, Օձիկին բերան ծաղիկ մը կա (Մասուն): 2. Մե ծով մը կա, Ծովու մեջ օձ մը կա, Օձու բերան խնձոր մը կա (Վան, 153): Հանելուկների պատասխանն է՝ ճրագ:

Երկու տարբեր տարածքներում գրի առնված հանելուկներից մեկում ճրագը նույնացվել է ծաղիկի հետ, մյուսում՝ խնձորի: Նույն բառերն այս դեպքում հանդես են գալիս հնչյունական տարբեր դրսևորումներով: Եվ նմանատիպ հանելուկներում լեզվական տարբերությունները հիմնականում քերականական իմաստների արտահայտություններով են պայմանավորված:

Այդուհանդերձ, հանելուկներում կարելի է հանդիպել նաև բառերի, որոնք ընդհանուր չեն, այլ սահմանափակվում են տեղային գործածություններով, և որոնց իմաստները մեկնաբանվում են բանահավաք հեղինակի կողմից: Ուստի այդ կարգի բառերն առանձնացրել ենք իբրև գավառաբանություններ:

Գավառաբանություններ կարող են դիտվել, օրինակ, տալլա տալ (ալեկոծվել, Լոռի⁴, 84), օրդուն (բանակ, Լոռի, 84), էրկեն (երկար, Ալաշկերտ, 78), ճնճղներ (ճնճղուկներ, Խոտորջուր, 78), վեխճար (ռչխար, Ղարաբաղ, 76), երտիս (երդիկ, Մասուն, 74), խող (հող, Դարալագյազ, Լոռի, 67), ըստիան (այստեղից, Դարալագյազ, Լոռի, 67), յազի (լանջ, սարահարթ, Արաբկիր, 66), կայնել է օլըրել է (կանգնել է, ոլորել է, Շիրակ, 61) և այլն: Դրանց մեջ կան նաև բազմաթիվ հարադրություններ և կրկնավոր բարդություններ: Օրինակ՝ Վիզը քյառթ-քյառթ (ծալքավոր), Խոտ կուտի՝ ձուր չի խմի (շերամ, Մալմաստ, Մուշ, 83), Ալալու-փալալու (վայրիվերո, խառնակիչ արարմունք), Յադգրդան Մարգոս (լու, Նոր Նախիջևան, 82), Չայիր-չիմեն (մարգ-մարգագետին) Վրան պյուպյուլ (սոխակ) կը պտտի (գուլի և միջատ, 82):

Հանելուկներում կան նաև բառեր, որոնք, կարծում ենք, դիպվածային են և գործածված են ոճական նկատառումներից ելնելով, ինչպես՝ անաճիկ բառը հետևյալ օրինակում. Անաճիկ (չաճող, չմեծացող), Լեզուն տաճիկ (տգրուկ, 84):

Հանելուկներում նկատելի են գրեհկաբանությունների որոշ տարրեր, որոնք շատ փոքր տոկոս են կազմում և նշված չեն ամբողջական բառերով:

Հետաքրքրական է բառերի ձևաիմաստային խմբերի կիրառությունը՝ հատկապես հականիշների գործածության առումով: Օրինակ՝

1. Չոր բացում եմ, Թաց փակում (անձրևանոց, 203):

2. Ուղտը մոտիկ կարածի, Բայց հեռու կը նայի (միտք-երևակայություն, 105):

3. Ինքը սև, Երեսը ճերմակ (սուրճ, 114):

⁴ Բառերը ներկայացնելիս առաջնորդվել ենք համահավաք բնագրի սկզբունքով և նշել այն տարածքների անվանումները, որոնցում դրանք գրի են առնված:

Հականիշները, որոնք մեծ մասամբ ածականներով են արտահայտված, յուրահատուկ նրբերանգներ են հաղորդում խոսքին՝ ստեղծելով գուշակվելիք առարկայի հեռավոր պատկերը:

Քերականական առանձնահատկություններ: *Անդրադառնալով ձևաբանական առանձնահատկություններին՝ պետք է նշել, որ ոճական յուրահատուկ կիրառություն են ստացել քանակական թվականները՝ բարբառային զանազան դրսևորումներով: Օրինակ՝ մեկ (մե, 61, մին, 60), երկու (երգու, 56), չորս (56, 54), տասը (տաս, 56), քառասուն (քյառսուն, 52), հազար (խազար, 52), հինգ հարյուր (խիյնգ խարիր, 82) և այլն: Դրանք երբեմն հակադիր պատկերներ են ստեղծում, երբեմն չափազանցություն են արտահայտում, երբեմն էլ առարկաների իրական քանակություն, որոնք վերաբերում են հանելուկի պատասխան առարկաներին:*

Դիմավոր բայերից մեծ կիրառություն ունեն սահմանական ներկան, անցյալ կատարյալը, ըղձական ապառնին (դրական և ժխտական խոնարհումներով): Օրինակներ

1. Սահմանական ներկա: *Մաղ օրը կը քալե, Գիշերը բերանը բաց կը մնա (կոշիկ, 120): Ես ալ ունիմ, Դուն ալ ունիս, Ձեր չոր ծառն ալ ունի (ստվեր, 24): Գետնի տակը կապրի, Ծաղիկներով կը շարվի (կարտոֆիլ, 45): Քշերքումն չի քաշվիլ, Բազարումն չի ծախվիլ, Նրա պես քաղցր բան չկա (քուն, 105):*

2. Անցյալ կատարյալ: *Թուրն վար ինկավ, Չթկուն (ձայն) չելավ (արև, 5): Լուսամուտից գողը մտավ ներս՝ Տերը բռնվավ (արև, 5):*

3. Ըղձական ապառնի: *Ես քնիմ՝ դու քնիս, Ես խածիմ՝ դու թոնիս (լու, 82): Լցնեմ տամ բուռը, Քշես ծակ դուռը, Բացվի քեֆը, Կորչի խելքը (օղի, 113): Լցնեմ տամ ձեռը, տաքնա փորը, Թախտրփի գրլոխը (օղի, 113):*

Ի դեպ, շատ գործածական են հարադիր բայերը՝ եղանակաժամանակային տարբեր դրսևորումներով: Օրինակ՝ Ման եմ գալիս՝ հավ չեմ, Լույս եմ տալիս՝ ճրագ չեմ (լուսատուիկ, 83):

Ինչպես և նկատելի է, նշված օրինակներում միաժամանակ առկա են հնչյունի ոճական գրեթե բոլոր նրբերանգները՝ թե՛ նմանաձայնություն, թե՛ առձայնայթ ը-երի կրկնությամբ, թե՛ բաղաձայնայթ:

Շարահյուսական առանձնահատկություններից ակնհայտ է միակազմ նախադասությունների գործածությունը: *Դրանք գլխավորապես անվանական անդեմ նախադասություններ են: Օրինակներ՝ Օսկե սուն, Էրդիքից կախված (արև, 5): Մկրտապոչ քյուքյուլ խաթուն (տեսքով տիկին) (ականջմտուկ, 83): Երկու տուն՝ Մեկ սյուն (քիթ, 93): Մսե շամփուր, Էրկաթե խորոված (մատ-մատանի, 122): Մն ոչխար՝ սիպտակ սար (թուղթ և գիր, 178): Դաստեմ ժախ (բանջար), Պատեն կախ (մորուք, 99): Ռաֆատեն (բաղաթ), Կախված պատեն (մորուք, 99):*

Հաճախ բարդ նախադասության առաջին բաղադրիչը միակազմ է, երկրորդը՝ երկկազմ: Մե չոբան, Օխրներ գիշերն է արածցնում (լուսին և աստղեր, 10): Պարզ նախադասություններ՝ Անշունչը շնչավորին բռնումա (թակարդ, 203): Բազմաբաղադրիչ Գիտեմ, որ կա, Բայց չգիտեմ երբ կգա (մահ, 107): Երկկազմ նախադասություններում ստորոգյալը հիմնականում պարզ է, սակայն քիչ չեն նաև բաղադրյալ ստորոգյալները: Օրինակ՝ Բնքը փատ է, Ուրքը մազ է (վրձին, 181): Ուշագրավ է խառը տիպի հնչերանգային նախադասությո-

յունների գործածությունը: Դրանցում առաջին նախադասությունը հարցական բնույթի է, երկրորդը՝ պատմողական, ինչպես՝ Էն ի՞նչն ա, ի՞նչը. Բռնեմ՝ բռնվը մին, Բաց թողամ՝ աշխարքովը մին (*փետուր, 77*): Էն ի՞նչն ա, ինչ. Տանս ապրող մարդ չկա, Իսկ դոնաղ էկողը տարով նստում ա (*գրապահարան, 181*):

Հանելուկների պատկերավորման միջոցները թելադրում է հենց հանելուկը, որը, լինելով գուշակման ենթակա խոսք, կառուցվում է փոխաբերությունների և համեմատությունների հիմքերի վրա՝ ստեղծելով համապատասխան իրի կամ երևույթի պատկերը: Դա պայմանավորված է նրանով, որ հանելուկները «վիպական մյուս ժանրերից տարբերվում են նրանով, որ իրենց արտաքին պոեզիայից և պատկերներից զատ ունեն նաև դրանցից զգալիորեն տարբեր իմաստ և բովանդակություն» (7):

Այս առումով հանելուկները շատ հետաքրքրական առանձնահատկություններ են դրսևորում: Այսպես՝ բառը բնագրում սովորաբար գործածվում է ուղիղ իմաստով, և միայն պատասխանը գուշակելուց հետո այն վերածվում է փոխաբերական գործածության:

Ակնհայտ դրսևորում ունեն թե՛ անձնավորումը, թե՛ չափազանցությունն ու նվազաբանությունը:

Չափազանցության օրինակներ՝ 1. Բյուլլուր (շուրջը) ծմակ (*անտառ*), Էծերը մեչը լիկը (*գլուխ, մազեր, 89*): 2. Մեզի մի ջուխտ գոմեշ ունինք, Արար աշխարհին վարում է, Մեր տան հետնն չի վարում (*աչքեր, 90*):

Անձնավորման օրինակ՝ Աղբյուր իմ, չորս դիս կամարները մագ է, Ալ (հենց որ) տուրտում (տխուր, տրտում) եկա, ջուրըս կը վազե (աչք և արտասուք, 93):

Նվազաբանության օրինակ՝ Մի հավանոց ունեմ, Մեջը երկու թուխս կա՝ իրանց ճուտերովը (*երկինք, արեգակ, լուսին և աստղեր, 10*):

Լեզվի արտահայտչամիջոցներից կամ բանադարձումներից գործածական են հատկապես կրկնությունը, աստիճանավորումը, հակադրությունը: Շատ գործուն է հակադրությունը, որն արտահայտվում է լեզվական տարաբնույթ միջոցներով: Բնչպես՝ Քույր ու եղբայր են. Մինն առավոտն է ծնում, երեկոյան մեռնում, Մյուսը՝ երեկոյան ծնում, առավոտը մեռնում (*արև և լուսին, 7*): Ծնունդս երկինք, Թաղումս գետին (*անձրև, 13*): Տանեմ դուսը՝ ծրծրա, Բերեմ ներսը՝ լա (սառույց, 20): Աչքեր ունի, ոտքեր չունի, Չու է ածում՝ փետուր չունի (*օձ, 64*): Աշխարք է՝ տուն չկա, Ծով է՝ ջուր չկա (*քարտեզ, 181*): Ոսկորե չափար (*ցանկապատ*), Մսե պահակ (*լեզու և ատամներ, 98*):

Աստիճանավորումը հիմնականում դրսևորվում է մարմնի մասերին վերաբերող հանելուկներում: Ի դեպ, այն արտահայտված է ն՝ բուն բնագրում, և՛ հանելուկի պատասխանական մասում:

Օրինակ՝ Մեկ սուն,
 Կելնի վերև՝ մեկ տուն, մեչը լիքը ուրագ,
 Կելնի վերև՝ մեկ սուն, էրկու տուն,
 Կելնի վերև՝ էրկու լուսնակ,
 Ընտից վերև՝ բաղ ու բոստան,
 Խոզեր մեչը կարածան (*վիզ, քիթ, աչքեր, գլուխ, միջատ, 101*):

Իբրև ամփոփում՝ նշենք, որ ժողովրդական հանելուկները հետաքրքրություն են ներկայացնում ոչ միայն իրենց գործածությամբ, այլև լեզվաոճական առանձնահատկություններով, որոնք ցայտուն ներկայացնում են ժողովրդի լեզվամտածողության տարբեր կողմերը: Ի վերջո, հանելուկներին ամենից բնորոշ առանձնահատկություններից է նաև նուրբ հումորը, որը դրսևորվում է դիպուկ համեմատությունների միջոցով: Այս առումով հանելուկը հարուստ է կատակարան ոճի զանազան դրսևորումներով:

ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКОЕ ИССЛЕДОВАНИЕ АРМЯНСКИХ НАРОДНЫХ ЗАГАДОК

ВАРСИК НЕРСИСЯН

Резюме

Язык армянских народных загадок отличается прежде всего характерным выражением *аллитерации и ассонанса, звукоподражания и рифмы*. Примечательны некоторые проявления морфологического уровня и разных слоев лексики. Большой интерес в загадках представляют такие синтаксические явления, как, например, конструкции с характерным звучанием, в которых одно из составляющих предложений *вопросительное, другое—повествовательное*. Заслуживает внимания также обилие односоставных предложений. Из выразительных и описательных средств чаще всего в армянских народных загадках встречаются метафора, гипербола и градация.

THE LINGUO-STYLISTIC STUDY OF ARMENIAN NATIONAL RIDDLES

VARSİK NERSISYAN

Summary

The language of Armenian national riddles differs first of all by characteristic expressions of *alliteration, assonance, onomatopoeia and rhyme*. Some demonstrations of different *lexical layers* and peculiarities in *morphological* level are remarkable. In the national riddles such syntactical facts, as, for instance, constructions with a particular characteristic *intonation*, where one of the components is interrogative, and the other is narrative. The use of *mononuclear* sentences is typical of riddles, as well. From expressive and descriptive means *metaphors, exaggerations, gradations* are oftener met in Armenian national riddles.